

ՍԻՄՎՈԼԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐՈՒՄ (պոստմոդեռնիզմի փիլիսոփայության դիտակետից)

Լ. Է. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԳՊՀ Հասարակական գիտությունների ամբիոնի դասախոս

Հաղորդակցության միջոցները բաժանվում են երկու մեծ խմբի՝ բառային և ոչ բառային: Հաճախ նախապատվությունը տրվում է բառային համակարգերին: Ինչպես նկատել է Ա. Շաֆֆն. «Երկար կարելի է վիճել այն հարցի շուրջ՝ բառային լեզուն է առաջնային, թե՛ ոչ բառայինը, սակայն չի կարելի կասկածի ենթարկել այն, որ քաղաքակրթություններում հնչյունային լեզուն եղել և մնում է սոցիալական հաղորդակցության գլխավոր միջոցը: Առանց դրա՝ հնարավոր չէ պատկերացնել գիտության, մշակույթի և տեխնիկայի առաջընթացը»¹:

Ժամանակակից պոստմոդեռնիստական փիլիսոփայական հայեցակարգը կասկածի է ենթարկում այս մոտեցումը: Պոստմոդեռնիստների խորին համոզմամբ անհրաժեշտ է վերաբժնորել հաղորդակցության ոչ բառային միջոցների դերը և գործառույթային նշանակությունը սոցիալական հաղորդակցության գործընթացում: Հատկապես՝ այն ոչ բառային միջոցների, որոնց շնորհիվ հասարակությունը կերտում և կարգավորում է իր հոգևոր-մշակութային աշխարհը: Ժամանակակից մարդը սոցիալական փոխազդեցության գործընթացում կարևորում է ինչպես պարզ-միանշանակ, այնպես էլ՝ էմոցիոնալ տեսանկյունից ծանրաբեռնված կերպարայինը և իռացիոնալը: Ուստի սիմվոլը, որպես սոցիալական հաղորդակցության ռացիոնալ-իրացիոնալ և կերպարային միջոց, առավել հստակ կարող է արտահայտել արդի ամբողջ, հատվածական և իռացիոնալ սոցիալ-հաղորդակցական իրականության օբյեկտիվ հատկանիշները:

Կարևոր է հաշվի առնել, որ պոստմոդեռնիզմի փիլիսոփայական հայեցակարգում սիմվոլը ներկայանում է նորովի, նոր բովանդակությամբ՝ փիլիսոփայական նոր հասկացությունների համատեքստում: Նշված փիլիսոփայական հայեցակարգում փոփոխության և փոխակերպման են ենթարկվում սիմվոլի վերաներկայացնող (ռեպրեզենտատիվ), գոյաբանական, իմացաբանական-արժեքային նախկին բնութագրիչները: Սակայն մինչ այդ ամենին անդրադառնալը, նշենք, թե ինչ իմաստով են կիրառված «պոստմոդեռնիզմ», «պոստմոդեռն» հասկացությունները սույն հոդվածի շրջանակներում, քանի որ վերջիններս միանշանակ չեն ընկալվում և մեկնաբանվում արդի փիլիսոփայության շրջանակներում:

Ընդհանրապես, համարվում է, որ «պոստմոդեռնիզմը» փիլիսոփայության մեջ ձևավորված ուղղություն է, որն իր գաղափարախոսությամբ հակադրվում է արևմտյան դասական փիլիսոփայության գաղափարական ավանդույթներին,

¹ Տե՛ս *Шафр А.*, Введение в семантику, М., 1963, էջ 65: Անհրաժեշտ է նշել, որ հաղորդակցության միջոցների այս երկու համակարգերը ոչ այնքան հակադրվում, որքան լրացնում են միմյանց, և անգամ հանդես են գալիս մեկ միասնական համակարգի շրջանակներում, երբ դրանց ենք մոտենում «սեմիոտիկականի» դիրքերից: Որպես մտածողության արդյունքներ՝ դրանք երկուսն էլ նշանային բնույթ ունեն:

իսկ «պոստմոդեռն» հասկացությունը խորհրդանշում է սոցիալ-մշակութային դարաշրջան, որտեղ առկա են դասականության նկատմամբ և՛ մերժողական, և՛ դրվատական վերաբերմունք: Երբեմն «պոստմոդեռնիզմը» ներառվում է ստրուկտուրալիզմի գաղափարական սահմանափակություններն արտացոլող ուղղության մեջ, որը պայմանականորեն «պոստստրուկտուրալիզմ» են կոչում:

Պոստմոդեռնիստական բնույթի առաջին գաղափարներն արտացոլում էին նորարարական միտումները արվեստի, մասնավորապես՝ ճարտարապետության ոլորտում: Պոստմոդեռնիզմի ժամանակակից տեսաբան Ի. Պ. Իլյինն այն սահմանում է որպես «փիլիսոփայական, էպիստեմոլոգիական, գիտատեսական և էնոցիոնալ-գեղագիտական պատկերացումների ամբողջություն, որը բազմիմաստ է և շարժունակ՝ կախված պատմական, սոցիալական ու ազգային համատեքստից»²:

Պոստմոդեռնիզմն արմատավորվել է քսաներորդ դարի 80-ական թվականներին և գիտական շրջանառության մեջ դրվել Ժ.-Ֆ. Լիոթարի «Պոստմոդեռնի իրավիճակ» գրքում (1979թ.). «Այս հետազոտության առարկան գիտելիքի կարգավիճակն է ժամանակակից առավել զարգացած հասարակություններում: Մենք որոշեցինք այն «պոստմոդեռն» կոչել: Այս բառընշանակում է մշակույթի դրությունը այն ձևափոխություններից հետո, որոնց ենթարկվել են խաղի կանոնները գիտության, գրականության մեջ և արվեստում XIX դարի վերջին»³: Դրա ծագումը կապված է փիլիսոփայական ռացիոնալության ավանդական ձևերի ճգնաժամի և մտածողության մետաֆիզիկական ոճի, բանականության ունիվերսալիզացիայի քննադատության հետ: Հանդես գալով հարաբերապաշտության դիրքերից՝ պոստմոդեռնիզմն իր քննադատության սլաքն ուղղում է արևմտյան «գործիքային» և պրագմատիկ բանականության, «հաշվարկող մտածողության» դեմ: Այն փորձում է դեկոնստրուկցիայի ենթարկել «այն ամենն, ինչը գիտականության հասկացություններն ու նորմերը կապում է օնտոթեոլոգիայի, լոգոցենտրիզմի, ֆոնոլոգիզմի հետ: Դրա հիմքում ընկած է այն համոզմունքը, որ ռացիոնալ մոտեցումն, ի վերջո, ենթադրում է իշխանական հարաբերությունը՝ ինչպես իրերի, այնպես էլ՝ սոցիալական ոլորտում: Պոստմոդեռնիզմի փիլիսոփայական հայեցակարգի շրջանակներում փիլիսոփայական հարաբերապաշտությունն է, սկեպտիցիզմն ու առհասարակ, գիտելիքի օբյեկտիվ բովանդակության հանդեպ էպիստեմոլոգիական կասկածը: Իրենց բազմազանությամբ հանդերձ՝ բոլոր այս հայեցակարգերը հավակնում են արմատական քննադատության և վերափոխման ենթարկել արևմտաեվրոպական մտածողությունը, հանդես են գալիս պանլոգիզմի, ռացիոնալիզմի, օբյեկտիվիզմի և պատմականության սկզբունքների բազմակողմանի քննադատությամբ:

Իհարկե, պոստմոդեռնիզմը մոդեռնիզմի պատմական հակաթեզը չէ: Այն զարգանում է մոդեռնիզմի հետ համատեղ, այն «... ապրում է ոչ թե նախորդի կույր հերքումով, այլ ի նկատի ունի ոչ միաժամանակի իրական միաժամանակայնու-

² Տե՛ս *Ильин И. П.* Постмодернизм. Словарь терминов, М., 2001, էջ 208:

³ Տե՛ս *Лиотар Ж.* Состояние постмодерна. URL:http://www.gumer.info/bogoslov_Buks/Philos/liot/intro.php.

թյունը»⁴: Ըստ Վ. Ա. Կուտիրյովի՝ պատմության փաստական տրամաբանությանն առավել համապատասխանում է այն դիրքորոշումը, որ «մեր ժամանակը մոդեռնիզմի համընդհանրականացման (ունիվերսալիզացիայի) և արմատականացման (ռադիկալիզացիայի), նրա՝ նոր որակի անցման դարաշրջան է՝ ընդհուպ նրա վերածմանը հիպեր-գեր-ուլտրա-մոդեռնիզմի»⁵: Իրական հետմոդեռնյան հասարակությունն ու նրան համապատասխանող աշխարհագրաօրոշումը դեռ առջևում են: Պոստմոդեռնիզմը դիտվում է նաև որպես մոդեռնի հետագա զարգացում, դրա հիմնադրույթների ամրապնդում, մոդեռնիզմի հերքում՝ դրա հաղթահարում, վերադարձ դեպի դասականությունը⁶:

Այսպիսով, արդի փիլիսոփայության շրջանակներում պոստմոդեռնիզմը կիրառվում է՝ բնութագրելու փիլիսոփայման այն տիպը, որը բովանդակապես-արժեքաբանորեն հեռանում է ոչ միայն դասական, այլև ոչ դասական փիլիսոփայական ավանդույթներից և ինքնահաստատվում՝ որպես հետարդիական՝ հետ-ոչ-դասական փիլիսոփայություն: Իսկ «պոստ» նախածանցն առավելապես տրամաբանական բնույթ ունի և ենթադրում է հեռացում, իսկ որոշ դեպքերում՝ նաև մերժում ընդունված դասական գաղափարական հիմքերը:

Այս առանձնահատկությունների համատեքստում է պոստմոդեռնիզմի փիլիսոփայությունը մոտենում «սիմվոլիկ» և դրա սոցիալ-հաղորդակցական գործառության մշանակությամբ: Փիլիսոփայության պատմության մեջ առաջին անգամ սիմվոլ հասկացությունն այնքան մոտենում և որոշակիանում է «սիմուլյակր», «դատարկություն», «հիպերռեալություն» պոստմոդեռնիստական փիլիսոփայական հասկացությունների համատեքստում: Հատկապես, սիմվոլի բովանդակությունն անմիջականորեն պայմանավորվում է այն հանգամանքով, թե ինչ տեսական-փիլիսոփայական իմաստավորում է ստանում «սիմուլյակրը» (լատ. Simulatio-թվացյալ, ձևականություն), բովանդակային և ռեպրեզենտատիվ ինչ հատկանիշներով է այն մոտենում «սիմուլյակրին»: «Սիմուլյակրը» Նոր ժամանակների արևմտաեվրոպական գեղագիտությունը բնութագրող մշանների ամբողջություն է: Այն անցնում է զարգացման մի քանի փուլ՝ աստիճանաբար մշանն ազատագրում իր ռեֆերենտից, որտեղ խորքային իրականության արտացոլումը փոխարինվում է դրա խեղաթյուրմամբ, ապա՝ դրա բացակայության քողարկմամբ, և վերջում՝ իրականության հետ դրա՝ որևէ կապի կորստով: «Սիմուլյակրը» «կրկնօրինակի կրկնօրինակ» է, «մշանի՝ մշան», այն՝ «... ձևականություն է, թվացյալություն, պատկերի, սիմվոլի իմիտացիա, մշան, որը ոչինչ չի մշանակում, դատարկ պարկուճ, որն ամրագրում է իրականության բացակայության սկզբունքային ներկայությունը»⁷: Ս. Ստրոնգը մշում է, որ ժամանակակից պոստմոդեռնիստական մշակույթը որակապես այլ բնույթ ունի, այն ունայն է,

⁴ Տե՛ս *Дянова В. М.* Постмодернистская философия искусства: истоки и современность, СПб., 2000//URL:http://www.anthropology.ru/ru/texts/dianova/ppa_1_5html#n12b

⁵ Տե՛ս *Кутырев В. А.* Философия постмодернизма, Нижний Новгород, 2006 // URL:http://zhurnal.lib.ru/k/kutyrew_w_a/filosofijapostmodernizma.shtml

⁶ Տե՛ս *Маньковская Н. Б.* “Париж со змеями” (Введение в эстетику постмодернизма), М., 1994, с. 170// URL:<http://philosophy.ru/iphras/library/mankov.html>.

⁷ Տե՛ս *Бычков В. В.* Эстетика, М., 2003, с. 364.

երևույթներին, սիմվոլներին իմաստ ու արժեք չի տալիս, փոխարենը՝ արժեզրկում և դիմագրկում է դրանք⁸:

Ըստ Ժ. Դերիդայի՝ սիմվոլն այսօր նույնամանում է ճիշտ իր հակադրության հետ, այն ոչ թե որևէ առարկայի կամ գաղափարի առկայությունն է փաստում, այլ՝ դրա բացակայությունը: Ըստ Ժ.Դելյոզի՝ մենք այժմ գործ ունենք պատոմոնիզմի գլխավար շրջան, սիմվոլի և «սիմուլյակրի» նույնացման, «սիմուլյակրի» դեմիստիֆիկացիայի հետ, իսկ «սիմուլյակրի» ոչ ռեպրեզենտատիվ մոդելը լոգոցենտրիզմի պոստմոդեռնիստական դեկոնստրուկցիայի ուժեղ հակափաստարկն է⁹:

Ժ. Դերիդան, Ժ. Դելյոզը, Ժ. Լականն իրենց ուսմունքներում պաշտպանում են սիմվոլի վերլուծության այս գիծը և Կ. Յունգի այն գաղափարը, որ Եվրոպայի պատմությունը՝ գիտության և տեխնիկայի զարգացման ճնշման արդյունքում իրականացող սիմվոլային գիտելիքի դեգրադացիայի պատմությունն է¹⁰: Եթե էռ. Կասիրերը, Ն. Բերդյաևը, Վ. Իվանովը, Ա. Բելովը սիմվոլն ուսումնասիրում էին ցույց տալու համար բանականության կառուցողական-ստեղծագործական և ոչ՝ պարզ-արտացոլող բնույթը սոցիալական-հաղորդակցական գործընթացում, ապա՝ ժամանակակից հեղինակներ՝ Ժ. Դերիդան, Մ. Ֆուկոն, Ժ. Լականը, Ռ. Բարթը, Ու. Էկոն այդ խնդրակարգը նախ՝ դուրս են բերում իմացաբանության շրջանակներից, այնուհետև՝ շեշտադրում դրա սեմիոտիկական հատկանիշները:

Սիմվոլի և սիմուլյակրի, սիմվոլայինի և սեմիոտիկականի, ռեալի և հիպերռեալի, նշանի և պատկերի հարաբերակցության խնդիրները պոստմոդեռնիստական հայեցակարգում ունեն միասնական հիմք և ենթադրում են ստեղծման միասնական ռազմավարություն, այն է՝ սոցիալ-հաղորդակցական իրականության ձևափոխումը: Ժ. Դելյոզի պատկերացմամբ՝ այսօր սիմվոլները ոչ մի հիմք չունեն և չեն մարմնավորում ոչ մի ռեալություն. «...եթե պատոմոնիզմում իրը գաղափարների կրկնօրինակն է, ապա՝ սիմուլյակրը՝ կրկնօրինակի կրկնօրինակն է, որը սերվելով իդեալական կերպարից, ընկել է այս քառասյին աշխարհը՝ վերածվելով այլևս որևէ գաղափարի չհամապատասխանող կերպարի»¹¹: «Սիմվոլն այլևս չի դեկավարում այն ամենը, ինչը կատարվում է նշանակվողի հետ, արտացոլում է ոչ թե նշանակվողի հետ կապը, այլ՝ դրանից ազատությունը, ի ցույց դնելով սիմուլյակրի իշխանությունը»¹²:

Այսպիսի սիմվոլ-սիմուլյակրները ժամանակակից սոցիալական հաղորդակցության կառույցներն են, որոնք ավելի հաղորդակցական դարձնելով իրականությունը, միաժամանակ թաքնվում են դրանից: «Հաղորդակցության զանգվա-

⁸ Տե՛ս *Беззузова О. В.* Образ и симулякр в концепции Жана Бодрийяра; Подobie и подражание, СПб., 2010, էջ 299.

⁹ Տե՛ս *Делез Ж.* Платон и симулякр; Новое литературное обозрение, № 5, էջ 72- 93, 1993. URL:<http://www.philosophy.ru/library/mtent/07deleuze.html>

¹⁰ Տե՛ս *Юнг. К.* Архетип и символ. М., 1991.

¹¹ Մեջբերումն ըստ Ա. И. Меречинч., К вопросу о постмодернизме и символическом типе мышления, էջ 12-14:

¹² Տե՛ս *Назарчук А. В.* Идея коммуникации и новые философские понятия XX века, Вопросы философии. М., 2011, №5, էջ 157-165// URL: <http://www.nazarchuk.com/articles/article29.html>

ծային միջոցների հանդես գալով, մենք վերջնականապես կորցրինք աշխարհը, հայտնվեցինք հիպերռեալության պայմաններում, քանի որ ունեցանք նշաններ, որոնք հաստատում են ոչ-ռեալության և ռեալության լրիվ բացակայության սկզբունքը»¹³: Իրերի ժամանակակից դրությունը թույլ է տալիս փաստելու, որ ժամանակակից սոցիալ-հաղորդակցական իրականության մեջ նշանակողը, նշանն ավելի է զնահատվում, ինչի հետևանքով սեմիոտիկական իրականությունը ճանաչվում է որպես միակ հնարավոր իրականություն: Սիմվոլ-սիմուլյակրների բազմաձևությունն անհնար է դարձրել վերաներկայացումն ընդհանրապես: Իսկ ողջ եվրոպական մշակույթը հենված է հենց վերաներկայացման հնարավորության վրա: Այն հավատի, որ սիմվոլը, նշանը կարող են ուղղորդել դեպի խորքային իմաստը և, որ գոյություն ունի մի կետ, որը երաշխավորում է այդ փոխարինման համարժեքությունը: Ի տարբերություն ոչ կամայական սիմվոլի, որն իր միջոցով իրական հարաբերություն և կենսական իրավիճակ է միջնորդավորում, պոստմոդեռնիստական սիմվոլ-սիմուլյակրը (դեյոդյան իմաստով) կամայական է, մաքուր նշան, որը կորցրել է կապը «կոնկրետ» տվյալ հարաբերության և իրականության հետ:

Սիմվոլ-սիմուլյակրների առաջացման հիմնական պատճառներից մեկը ձևավորված վիրտուալ իրականությունն է, որում սոցիալական հաղորդակցությունը ստեղծվում և պահպանվում է հաղորդակցական տեխնոլոգիաների, հաղորդակցության զանգվածային միջոցների և համացանցի միջոցով: Սոցիալական հաղորդակցության իրական գործընթացին փոխարինելով՝ վիրտուալ հաղորդակցության միջոցները (սիմուլյակրները) վերացնում են սահմանը սոցիալական-ռեալի և հիպերռեալի միջև, նպաստում «ընդլայնված ռեալության» ձևավորմանը, որում սոցիալական և վիրտուալ նշանակությունների դաշտը շատ լայն է և կտրված է իրականությունից:

Այսպիսով, հասարակության զարգացման ժամանակակից՝ հետարդյունաբերական փուլում, սոցիալական փոխազդեցության համակարգը էական փոփոխությունների է ենթարկվել: Սոցիալ-հաղորդակցության իրականության մեկնաբանության գործում սկզբունքային դերակատարություն են ձեռք բերել սիմվոլ-սիմուլյակրները: Սիմվոլի ժամանակակից՝ պոստմոդեռնիստական փիլիսոփայական տեսությունը զարգացնում է սիմվոլի մեկնաբանության նեգատիվ մոտեցումը*, զրկում սիմվոլը սոցիալ-հաղորդակցական իրականության ճանաչողական գործառնությունից, իմաստագրկում սիմվոլի գոյաբանության հիմնախնդիրը, վերացնում նշանի և նշանակվողի միջև սահմանը: Փոփոխության և փոխակերպման են ենթարկվում սիմվոլի վերաներկայացնող (ռեպրեզենտատիվ), գոյաբանական, իմացաբանական-արժեքային նախկին բնութագրիչները, դրա գործառնությունը նշանակությունը սոցիալ-հաղորդակցական գործընթացում, ինչը հիմք է տալիս փաստելու, որ այժմ մենք գործ ունենք սիմվոլի սոցիալ-հաղորդակցա-

¹³ Տե՛ս նույն տեղում, էջ 160 // URL:<http://www.nazarchuk.com/articles/article29.html>

* Եթե գոյաբանական մակարդակում սիմվոլն արտահայտում և մարմնավորում է տիեզերականության սկզբունքը, ուրեմն այն ձևակերպող տեսությունը պոզիտիվիստական է, հակառակ դեպքում՝ նեգատիվ: 20-րդ դ. պոզիտիվիստական տեսությունների շարքին էին դասվում ռուսական սիմվոլիզմը, անունների փիլիսոփայությունը, Ա. Ուայթհեդի, Էռ Կասիրերի, Ժ. Լականի տեսությունները:

կան դերի մեկնաբանման և արժևորման հարաբերականորեն նոր, ինքնուրույն փուլի հետ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Беззутова О. В.** Образ и симулякр в концепции Жана Бодрийяра, Подовие и подражание. Сборник статей. // СПб.: Философский факультет СПбГУ, 2010, էջ 292 - 308:
2. **Бычков В. В.** Эстетика: Учебник.// М., 2004, 556 էջ:
3. **Делез Ж.** Платон и симулякр // Новое литературное обозрение, N 5, 1993, էջ 45-56:
4. **Дианова В. М.** Постмодернистская философия искусства: истоки и современность, СПб., 1999, 240 էջ:
5. **Ильин И. П.** Постмодернизм. Словарь терминов, М., 2001, 384 էջ:
6. **Кутырев В. А.** Философия постмодернизма, Н.Н., 2006, 95 էջ:
7. **Льотар Ж.-Ф.** Состояние постмодерна, Перевод с французского Н. А. Шматко, М., 1998, 629 էջ:
8. **Манковская Н. Б.** Париж со змеями (Введение в эстетику постмодернизма), М., 1994, 220 էջ:
9. **Меречин А. И.** К вопросу о постмодернизме и символическом типе мышления, Вопросы философии, М., 2009, N 8, էջ 45-48:
10. **Назарчук А. В.** Идея коммуникации и новые философские понятия XX века, Вопросы философии. М., 2011, N 5, էջ 157-161:
11. **Шафр А.** Введение в семантику, М., 1963, 123 էջ:
12. **Юнг К.** Архетип и символ, М., 1991, 589 էջ:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՅԵՐԵՐ

URL:<http://www.philosophy.ru/library/mtent/07deleuze.html>:
URL:<http://www.nazarchuk.com/articles/article29.html>:
URL: http://razumei.ru/files/others/pdf/Yng_arhetip_i_simvol.pdf:
URL: <http://www.nazarchuk.com/articles/article29.html>:
URL: http://www.anthropology.ru/ru/texts/dianova/ppa_1_5html#n12b:
URL: http://zhurnal.lib.ru/k/kutyrew_w_a/filosofijapostmodernizma.shtml:
URL:<http://philosophy.ru/iphras/library/mankov.html>:
URL:http://www.gumer.info/bogoslov_Buks/Philos/liot/intro.php:

СИМВОЛ В СОЦИАЛЬНО-КОММУНИКАЦИОННЫХ ИЗМЕНЕНИЯХ СОВРЕМЕННОСТИ (с точки зрения философии постмодернизма)

Л. Э. АЛЕКСАНИЯ

Современное постиндустриальное общество претерпело существенные изменения в системе социального взаимодействия. Невербальные средства коммуникации приобрели ведущую роль в процессе социальной коммуникации. В этой связи, особенно важную роль постмодернисты дают символам. В постмодернистской философской теории развивается негативная концепция символа, символ лишается гносеологической функции, лишается смысла и проблема онтологии символа, разрушается граница между знаком и означающим. Есть основания заметить, что сейчас мы имеем дело с относительно новой и самостоятельной фазы в развитии символа в философской теории постмодернизма, в которой символы постепенно становятся симулякрами.

SYMBOL IN THE SOCIAL CHANGES OF MODERN COMMUNICATION
(from the point of view of the philosophy of postmodernism)

L. E. ALEQSANYAN

The modern post-industrial society has undergone significant changes in the social communication. Non-verbal systems of communication have acquired a leading role in social communication. In this regard, a particularly important role postmodernists provide symbols. In the postmodern philosophical theories, develops the negative concept of symbol, where symbole loses its epistemological and ontological functions, collapses the boundary between the sign and the signified. There is reason to insist, that now we have relatively new and independent phase in the development of symbol in the philosophical theory of postmodernism, where the symbol gradually becomes the simulacrum.